ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
«ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ

№36.

«26» ապրիլի 2024թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ, Կ. Շահինյան 83
☏ 098877800
էլ. փոստ՝ martunignum@mail.ru

«ՎԱՐԴԱՆ ԴԱՎԹՅԱՆ» ԱՁ-ԻՆ
ՀՎՀՀ՝ 72909548
Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,
ք. Մարտունի, Շահումյան 112
էլ. փոստ: vahagn.martuni@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «Վարդան Դավթյան» ԱՁ-ի միջև 22.03.2024թ. կնքված **ՄՀԿՍԲՀՈԱԿ2-ԳՀԱՊՁԲ-24/01** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Վարդան Դավթյան» ԱՁ-ն պարտավոր էր մատակարարել դիզելային վառելիք:

Քանի որ վերոնշյալ ապրանքը չի մատակարարվել, ուստի, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ը 2024 թվականի ապրիլի 26-ին ամբողջությամբ միակողմանի լուծել է պայմանագիրը և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1 204 976 ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 1 807 465 ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի 163258109384 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. մայիսի 3-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1 204 976 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 1 807 465 ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները, ապա «Վարդան Դավթյան» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի վերը նշված հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. մայիսի 3-ը ներառյալ ներկայացնել «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ:

«Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ
սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Մ. Գաբրիելյան